



*«Նոր ժամանակի
կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն,
կոնֆլիկտներ*

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Էսմիրա Պետրոսյան

*Ուսումնական հաստատություն՝ «Երևանի Ն.Վ. Գոգոյի անվան
համար 35 հիմնական դպրոց» ՊՈԱԿ*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՏԼԻԿՏՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....	5
2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՏԼԻԿՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ.....	12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը երեխայի կյանքի և զարգացման կարևորագույն օղակն է, որտեղ տիրող հոգեբանական մթնոլորտը ներազդում է ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի, հատկապես՝ երեխայի վրա:

Հոգեբանորեն բարենպաստ ընտանիքը մեծ սիրով և պատասխանատվությամբ է վերաբերվում իր բոլոր պարտականություններին և դերերին, իրականացնում իր գլխավոր գործառույթները՝ բավարարելով ընտանիքի անդամների՝ հուզական աջակցության, անվտանգության զգացումի, սեփական «ես»-ի զգացման և նշանակության, հուզական ջերմության և սիրո պահանջները, ինչը երեխայի անձի առողջ զարգացման գլխավոր պայմանն է: Այսօր ընտանիքը շատ խոցելի է, քանի որ մեկը մյուսին հաջորդող բացասական գործոնների ազդեցությունը՝ աղետ, պատերազմ, տնտեսական ճգնաժամեր, մի շարք այլ սթրեսային գործոնների հետ զուգընթաց, բացասաբար են անդրադառնում յուրաքանչյուր անձի հոգեկան առողջության վրա: Երեխան, որը ընտանիքի ամենից փոքր, անպաշտպան էակն է՝ միշտ ամենախոցելին է նման պայմաններում, քանի որ նա «ստանում է միայն այն, ինչ նրան կարող են տալ ծնողները»: Ցավոք, հոգեբանական անբարենպաստ ընտանիքներում, դա ծնողների կողմից անտարբերությունն է, սառնասրտությունը, դաժան վերաբերմունքը, ինչը մեծապես վտանգում է երեխայի անձի, հոգեկանի առողջ և ներդաշնակ զարգացմանը և ողջ կյանքում ուղեկցում նրան հիշողությունների, տպավորությունների, տարաբնույթ դրսևորումների տեսքով: Յուրաքանչյուր երեխա պետք է ունենա համերաշխ ընտանիք, ստանա միայն սեր և ջերմություն, իսկ հոգեբանորեն անբարենպաստ ընտանիքներում դա մնում է միայն որպես «մանկական երազանք»:

Այսօր հոգեբանորեն անբարենպաստ ընտանիքները շատ մեծ թիվ են կազմում ողջ աշխարհում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն, ամբողջ աշխարհում 275 մլն երեխա տարեկան ենթարկվում է ընտանեկան բռնությունների:

Հայ ընտանիքում, որը դարեր ի վեր բնութագրվել և աշխարհում հայտնի է եղել իր բարոյականությամբ, միասնականությամբ, նվիրվածությամբ, որտեղ ընտանիքի անդամների միջև ընկած է եղել միայն սերն ու հարգանքը, տարածված երևույթներ են դարձել ընտանիքի անկայունությունը, կոնֆլիկտների և բռնության դրսևորումները, նկատվում է նաև մուրացկան և անօթևան երեխաների թվի աճ և այլն: «Հայ օգնության

ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոնի պաշտոնական տվյալների համաձայն՝ տարվա ընթացքում միջին հաշվով ընդունվող 150 երեխաներից կեսից ավելին ընտանեկան բռնությունների գոհ են:

Ընտանեկան անբարենպաստության պայմաններում երեխաները խոցելի են դառնում ընտանեկան կոնֆլիկտների տարբեր դրսևորումների՝ հոգեբանական, ֆիզիկական, սեռական բռնության, անտեսված լինելու, նույնիսկ սեփական ծնողի կողմից սպանված լինելու նկատմամբ: Ցավոք, երեխաներն ընդօրինակում են ծնողների նման վարքը և այն վերարտադրում ծնողների, ուսուցիչների, հասակակիցների հետ շփման ընթացքում, իսկ հետագայում այն կարող է վերարտադրվել սեփական ընտանիքում և երեխաների դաստիարակության գործընթացում:

Ընտանեկան կոնֆլիկտների անմիջական ազդեցությամբ երեխաների առանձնահատկությունների ուսումնասիրությունը, կոնֆլիկտների հետևանքների, հոգեբանական տրավմաների ախտորոշման և հոգեշտկողական ծրագրերի ստեղծման անհրաժեշտությունը ներկա ժամանակաշրջանում դարձել է ժամանակի պահանջ, քանի որ մանկության տարիներին կոնֆլիկտների ենթարկվելը, հատկապես ծնողի կողմից, կարող է դառնալ հանցավորության, ինչպես նաև հետագայում հասարակության մեջ սեփական մանկական փորձի վերարտադրման պատճառ:

Վերոնշյալ խնդիրներով էլ պայմանավորված է հետազոտական թեմայի

արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի ***նպատակն*** է ուսումնասիրել ընտանեկան հոգեբանությունը, հաստկապես կոնֆլիկտների ազդեցությունը սովորողների հոգեբանական զարգացման գործընթացի վրա:

Հետազոտական նպատակով պայմանավորված՝ մեր առջև դրել և լուծել ենք հետևյալ ***խնդիրները***՝

- ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների էությունը և տեսակները,
- ներկայացնել ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների վրա և հնարավոր լուծումները:

1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Հետազոտական աշխատանքում նկարագրված են ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, դրանց առաջացման պատճառները և դրանց բացասական հետևանքները երեխայի անձի ձևավորման վրա:

Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում:

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների գործառույթները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները¹:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես «մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական

¹ Մեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: «Ուրարտու» համալս., 2010, էջ 12:

սուր հուզական ապրումների հետ»²: Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ «կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»³: Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա.Մ.Ստոյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. «Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով»⁴:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է:

Ներկայացնենք ընտանեկան կոնֆլիկտների տեսակներն ու դրանց հիմնական պատճառները:

1. Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև: Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի «ծանր» բնավորությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլն: Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին

² Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990. – с. 41.

³ Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002. с. 22.

⁴ Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003. с. 29.

ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության 1-ին տարում, հատկապես երբ ընտանիքում երեխա է ծնվում, երկրորդը՝ ամուսնության 3-7-րդ տարում, երրորդը՝ 17-25-րդ տարում⁵:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են գույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ գույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

- **ներքոտիկ ընտանիքներ**, որտեղ գույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն,
- **ճգնաժամային ընտանիքներ**, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,
- **պրոբլեմային ընտանիքներ**, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական գույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա⁶: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է

⁵ Միրզոյան Վ.Խ., Ընտանեական կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, ՇՊՀ տեղեկագիր, Գյումրի, 2014, էջ 225-226:

⁶ Лобан Н.А. Конфликтология: УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. с. 22.

առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ակնատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեամատիկ և այլ հիվանդություններ:

Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:

2. Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի ճգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ: Ծնողների տեղեկացվածությունը, նրանց

հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա:

Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում «հայրեր և որդիներ» խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել «իդեալական ծնողի» իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա «իդեալական» և «իրական» ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների:

Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված:

Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, քարով հարվածել բակի կատուներին և շներին: Գերադասում է խաղալ «ագրեսիվ» խաղալիքներով՝ զենք, ատրճանակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդկանց նկատմամբ:

Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել:

Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:

3. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը:

Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում «նորմալ» է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ:

Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ: Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում:

Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների

ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը:

Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

Ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է «ծանր» բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՎՐԱ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Ընտանիքն այն լաբորատորիան է, որտեղ ձևավորվում է երեխայի անձը: Եվ ինչպես 19-րդ դարի ռուս դրամատուրգ և փիլիսոփա Լև Տոլստոյն էր ասում՝ բոլոր երջանիկ ընտանիքները նման են և յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի: ընտանիքում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն մեծապես նպաստում է երեխայի զարգացման և աշխարհայացքի ձևավորման վրա: Կարևոր է որոշել, թե սովյալ իրադարձությունն ինչպիսի՞ հետևանքներ կարող է թողնել և որչա՞փ է դրա ազդեցությունը, կարճաժամկե՞տ է, թե՞ երկարաժամկետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան փոփոխությունները (հատկապես ամուսնալուծություն, ընթացիկ տարաձայնություն կամ նոր ամուսնությունը) էապես փոխում են երեխայի վարքը, երբեմն դարձնում ագրեսիվ, երբեմն՝ ինքնամփոփ կամ ինքնուրույն:

Ընտանեկան կայուն համակարգի բաժանումը (ամուսնալուծությունը կամ ընտանիքի անդամի կորուստը) առաջացնում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- եկամտի փոփոխություններ (սոցիալ-ֆինանսական վիճակի ճգնաժամ),
- հայրական/մայրական բացակայություն (հետևաբար՝ երեխայի վրա ազդեցության թուլացում),
- անբավարար մայրական/ հայրական առողջություն,
- միջանձնային տարաձայնություններ, որոնցից կարող են ծագել նորերը,
- ցածր վարկանիշային ընտանեկան մթնոլորտ, ծնող-երեխա հարաբերությունների արագ անկում,
- կրթության անցում հետին պլան հանուն նյութաֆինանսական միջոցների հայթայթման:

Շատ դեպքերում երեխայի դաստիարակության գործում ի հայտ եկող խնդիրները պայմանավորվում են ոչ մի այն ընտանեկան բաժանումներով, այլև ծնողների զբաղվածության մակարդակի աճով, որի արդյունքում հետին պլան են մղվում բազում կարևորագույն հարցեր: Շատ դեպքերում էլ ընտանեկան անտարբերությունը ծնում է նոր կոնֆլիկտ, որը ստանում է շարունակական բնույթ: Դա երեխաների մոտ հետզհետե առաջացնում է զայրույթ, անհանգստություն, տխրություն, առողջական

խնդիրներ, որոնց մասին նրանք դադարում են բարձրաձայնել, կարծելով, որ ընտանիքում այդ պահին կան ավելի կարևոր հիմնահարցեր, քան իրենք են: Նաև կորում է ինքնավստահության ու անվտանգության զգացումը, որի երաշխավորները հենց ընտանիքի մեծահասակներն են: Հատկանշական է քնի խանգարումն ու դպրոցում կենտրոնանալու դժվարությունը: Սա աստիճանաբար փոխարկվում է միջավայրի երևույթների նկատմամբ անտարբերության, ապա անվստահության առաջացման, գիտության, արվեստի, սպորտի նկատմամբ հետաքրքրասիրության կտրուկ նվազման և հետագայում կարող է արտահայտվել ագրեսիայի, նախանձի ու թշնամանքի (քանզի նա հետ է մնում մյուսներից), հակահասարակական պահվածքի, հանցագործության և վանդալիզմի դրսևորումներով: Ահա թե ինչու, երբեմն վատ ճանապարհով սկսում են գնալ այն ընտանիքների երեխաները, որտեղ թվում էր թե ամեն բան հիանալի է, մինչդեռ խնդիրը անտարբերության կամ դրանից բխող կոնֆլիկտների մեջ է: Այս ամենից բացի կոնֆլիկտային ընտանիքների երեխաները մեծ հաշվով խնդիրներ են ունենում միջանձնային հարաբերություններում, դժվարանում են լուծումներ գտնել և շատ անգամ էլ դրանք փնտրում են վատ միջավայրում: Այս ամենը բացասաբար է անդրադառնում պատանեկության և հասունության անցման տարիքում նրանց ռոմանտիկ հարաբերությունների վրա, քանզի ընտանեկան բախումներն իրենց պատճառահետևանքային կապերով նպաստում են այն բանին, որ երեխան ավելի բացասաբար ընկալի սոցիալական միջավայրը, ունենա վատ տպավորություններ և պատկերացումներ ընտանեկան հարաբերությունների և արժեքների մասին: Այսպիսով, մի գույգի կոնֆլիկտային անկայուն հարաբերությունը կարող է առաջացնել մեկ այլ բացասական հարաբերություն հաջորդ սերնդում:

Հատկանշական է, որ սթրեսն առաջացնում է որոշակի ֆիզիոլոգիական ռեակցիաներ, որոնք կարող են վնասել ուղեղի զարգացմանը: Երեխան կարող է նաև դիմագրավել դրան, շնորհիվ գենետիկական հատկանիշների կամ բարձր դիմադրողականության, թեև գիտական հետազոտությունները փաստում են, որ բոլոր դեպքերում ծնողական կոնֆլիկտն անդրադառնում է երեխայի ֆիզիկական զարգացման ու հոգեկերտվածքի ձևավորման վրա, անգամ եթե նա որդեգրված զավակ է:

Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը սովորաբար աստիճանաբար նվազում է միայն 2-3 տարվա ընթացքում, սակայն կարող են ունենալ նաև անդառնալի հետևանքներ: Վիճակագրական տվյալների համաձայն, աշխարհում երիտասարդների 41%-ը հեռանում է ընտանիքից վատ հարաբերությունների պատճառով⁷:

Շատ կարևոր է ներընտանեկան խնդիրների հաղթահարումը համատեղ ջանքերով: Ընտանեկան հակամարտությունը ծագում է ընտանիքի տարբեր անդամների տեսակետների և /կամ համոզմունքների բախումից, որի արդյունքում կողմերը գալիս են սխալ եզրակացությունների և երկուստեք մեղադրանքների: Հատուկ են տրեպերում, երբեմն, կոնֆլիկտը կարող է նաև որոշակի դրական ազդեցություն ունենալ՝ բարձրացնելով երեխայի իրավագիտակցությունը, արդարամտությունը կամ ընտանեկան կայունության կարևորության մասին գիտակցությունը, եթե այն ընթանում է ոչ բռնի, հանգիստ պայմաններում և կողմերը պատրաստակամորեն լսում են միմյանց, հայտնում դիրքորոշումները, որոնք բերում են խնդրի խաղաղ կարգավորման:

Կոնֆլիկտների հաղթահարման համար հարկավոր է իմանալ.

- պետք է գատել խնդիրը մարդուց,
- միշտ սպասել և միայն որոշ ժամանակ անց դատել սառը գլխով,
- հիշել, որ գաղափարը ոչ թե փաստարկը շահելու մեջ է, այլ հակամարտությունն ի վերջո լուծելու մեջ,
- հիշել, որ մյուս կողմում անձ է, ով պարտավոր չէ համաձայնել դիմացինի ամեն բանի հետ,
- պետք է սահմանել խնդիրը և երբեք չշեղվել այլ հարցերի ուղղությամբ,
- պետք է խոսել ցածրաձայն, հստակ և ողջամիտ,
- հիշել, որ խելացի մարդը միշտ կարող է ելք գտնել:

Պետք է կարևորություն տալ ընտանեկան ավանդույթներին: Անկախ ստեղծված իրավիճակից երբեք չդադարեցնել երեխայի կրթության խիստ վերահսկողությունը, ապահովել նրա առողջ ժամանցը, շփումն ընկերների, կենդանիների հետ, կազմակերպել բազմաժանր ֆիլմերի դիտումներ, բազմաժանր երաժշտության

⁷Հարությունյան Ն. Ա. Ընտանիքի կայունության հոգեբանական հիմքերը: Մենագրություն, Էդիթ Պրինտ, Երևան, 2018, էջ 45:

ունկնդրումներ, ընթերցանություն և ձեռքի աշխատանքների պատրաստում, որոնք խթանում են երեխայի առողջ դաստիարակության զարգացումը, բաձրացնում արժեհամակարգը, զբաղեցնում այնպես, որ նա երբեք էլ չնկատի առկա խնդիրը: Հմտորեն ներգրավել երեխային խնդրի դրական հանգուցալուծման մեջ և ապահովել ընտանիքի ու երեխայի կայուն զարգացումը:

Ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման և երեխաների վրա դրանց ազդեցության թուլացման համար ծնողներին խորհուրդ է տրվում.

- հնարավորին չափ հարկավոր է խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, հատկապես երեխաների առկայության պարագայում,
- անխուսափելի կոնֆլիկտների դեպքում առավել ուշադիր լինել երեխաների հուզական ներաշխարհի կայունության պահպանման և ֆիզիկական զարգացման խնդիրներին,
- աշխատանքային լարվածության պարագայում հարկավոր է միշտ և հնարավորին շատ ժամանակ հատկացնել երեխաներին,
- միշտ պետք է հավատարիմ մնալ բարեկամական տոնայնությանը,
- անմիջապես արձագանքել երեխայի մոտ թեկուզ չնչին բացասական վարքագծի դրսևորումներին,
- մշակել ներընտանեկան խնդիրները հմտորեն շրջանցելու տարբերակներ և հնարավորության դեպքում երեխային աննկատ կերպով ներգրավել այդ գործընթացում,
- եթե կոնֆլիկտի մասին լռել և հմտորեն շրջանցել հնարավոր չէ, ապա պետք է անպայման երեխային ասել ճշմատությունը և լուծումներ փնտրել նրա հետ միասին,
- միշտ հարկավոր է երեխային զբաղեցնել հետաքրքիր ժամանցով և երբեք չաղավաղել նրա մանկական հիշողությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երեխաների վրա ընտանեկան կոնֆլիկտների հոգեբանական ազդեցության վերաբերյալ գիտատեսական վերլուծությունների արդյունքները հնարավորություն տվեցին՝ կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Ընտանեկան կոնֆլիկտներն ազդում են ապագա ընտանիքի վերաբերյալ երեխայի անձի բացասական դիրքորոշումների, պատկերացումների ձևավորման վրա: Ընտանեկան կոնֆլիկտները տղա երեխայի մոտ հանգեցնում են հակառակ սեռի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը՝ խեղաթյուրելով կնոջ կերպարը, աղջիկ երեխայի մոտ՝ ապագա ընտանիքում կնոջ որպես մոր կերպարը: «Ապագա ընտանիքի» մոդելի խեղաթյուրումը հետագայում դրսևորվում է սեփական ընտանիքում և հանդես գալիս որպես ընտանեկան կոնֆլիկտների պատճառ. տղաների դեպքում կոնֆլիկտներ կնոջ հետ, աղջիկների դեպքում՝ երեխայի:

2. Ընտանեկան բռնության և ծնողի անձնային որոշ առանձնահատկությունների միջև կա որոշակի կապ. ծնողի ընտանեկան մոդելի խեղաթյուրված պատկերացումները, ամուսինների փոխհարաբերությունների միջև խնդիրների առկայությունը հաճախ երեխայի նկատմամբ բռնության պատճառ է հանդիսանում: Ընտանեկան բռնության և ծնողի «իդեալական երեխայի» սպասումների և պատկերացումների միջև կա որոշակի հարաբերակցություն. հաճախ երեխան չի արդարացնում «իդեալական երեխայի» վերաբերյալ ծնողի սպասումները, ինչը լրացուցիչ լարվածություն կարող է առաջացնել ծնողի մոտ և ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ դառնալ:

3. Ընտանեկան կոնֆլիկտների և երեխայի անձի միջև կա որոշակի հարաբերակցություն. երեխայի հուզական անգրգռվողականության բարձր մակարդակը, բարեխղճության և ինքնակառավարման ցածր մակարդակը հաճախ ծնող-երեխայի հարաբերություններում ընտանեկան կոնֆլիկտի պատճառ է դառնում:

4. Ընտանեկան կոնֆլիկտների հոգեբանական բացասական հետևանքների հաղթահարումը պահանջում է համալիր մոտեցում, որին ուղղված հոգեկարգավորիչ աշխատանքների շրջանակներում պետք է կազմակերպվեն սեմինարներ և խորհրդատվական աշխատանքներ ծնողների հետ, թրեյնինգներ՝ ընտանեկան կոնֆլիկտների մթնոլորտում ապրած երեխայի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Միրզոյան Վ.Խ., Ընտանեական կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, ԾՊՀ տեղեկագիր, Գյումրի, 2014, 223-231 էջեր:
2. Հարությունյան Ն. Ա. Ընտանիքի կայունության հոգեբանական հիմքերը: Մենագրություն, Էդիթ Պրինտ, Երևան, 2018, 280 էջ:
3. Մեղրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: «Ուրարտու» համալս., 2010, 456 էջ:
4. Лобан Н.А. Конфликтология: УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. 471с.
5. Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990. - 144с.
6. Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002. 240с.
7. Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003. 382с.